գործերի միջև ձեռնտու են միայն ժողովուրդներին յաղթողներին և Հայաստանի ու Ադրբէջանի աշխատաւոր դասակարգերին շահագործողների համար։ Հայաստանի և Ադրբէջանի սահմանների վերաբերեալ բոլոր վիճելի հարցերը կարող են լուծուել միայն աշխատաւորութեան և ինքնորոշուող ժողովուրդների կամքով։

Խորհրդային Ադրբէջանը չի կարող տանել ո՛չ մի չովինիստական, ազգայնամոլ յարձակողական գործողութիւն, և ցեղային թշնամանքը տեղ չպիտի ունենայ Խորհրդային Ադրբէջանում։

Ռուսաստանի Ընկերվարական Դաշնակցական Հանրապետութեան անունից առաջարկում եմ Հայաստանի կառավարութեան անմիջապէս դադարեցնել ամէն տեսակ զինուորական գործողութիւն Խորհրդ. Ադրբէջանի հետ և դուրս հանել զօրքերը նրա սահմաններից։ Այդ պէտք է կատարուի 24 ժամուայ ընթացքում, ներկայ առաջարկութիւնն ստանալու օրից սկսած, և չկատարումը կը նշանակի որպէս մարտահրաւէր ուղղած Ռուս. Ընկերվ.—Խորհրդային Հանրապետութեան՝ Հայաստանի կառավարութեան կողմից։ Վերոյիշեալ առաջարկը կիրագործուի ռուսական կարմիր բանակի ուժերով։ Հետևանքների ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է Հայաստանի կառավարութեան վրա։

Կովկասեան ճակատի Ռազմա–Յեղափոխական Կոմիտէի նախագահ Օրջոնիկիձէ։ Առաջին բանակի Ռազմա–Յեղափոխական խորհուրդ՝ Կիրով, Մեխանոշին, Լեվանդովսկի, Բագու, մայիս 1, 1920։

Թէպէտ, միջազգային օրէնքներով, նման վերջնագրերը կարելի էր համարել չընդունուած, այնուամենայնիւ, Հայաստանի կառավարութիւնը պատասխանեց երկուսին էլ, որպէսզի ոչ մի կասկած չմնայ, թէ մենք որևէ միտք ունենք անհամաձայնութիւն կամ բաղխումներ առաջ բերել Հայաստանի ու Ադրբէջանի միջև։

«Բագու, Ազրբէջանի խորհրդային Հանրապետութեան արտաքին գործերի կոմիսարի պաշտօնակատար Հուսէյնովին։ պատճէնը Հայաստանի ներկայացուցիչ Մ։ Յարութիւնեանին։ Մոսկուա, Լենինին, Չիչերինին և Կովկասեան ճակատի Ռազմա–Յեղափոխական խորհրդի նախագահ Օրջոնիկիձէին։

Երևան, 4 *մայիսի։ Ի պատասխան ապրիլ 30–ի ձեր վերջնագրի, որ մենք ստացանք մայիս 1–ին, Հայաստանի կառավարութեան անունից հաղորդում եմ հետևեալը։*

Առաջին կէտի առթիւ։ Ադրբէջանեան հողի վրա հայկական զօրք չի եղել ու չկայ։ Ընդհակառակը, ձեր իսկ ձեռքով տապալուած մուսաւաթական կառավարութեան զօրքերը ու կազմակերպած բանդաները մինչև այժմ շարունակում են մնալ Հայկական Ղարաբաղի շրջաններում ու դեռ ևս քիչ առաջ հայ աշխատաւոր գիւղացիութեան ջարդն էին անում և այրեցին Շուշի քաղաքի հայկական մասը ու բազմաթիւ գիւղեր։ Լիովին համաձայնելով կովկասեան ճակատի Ռազմա–Յեղափոխական Խորհրդի նախագահ Օրջոնիկիձէի՝ ձեր կողմից Ռուսաստանի խորհրդային իշխանութեան արած դիմումի հետևանքով մեզ ուղարկուած վերջնագրի մէջ արտայայտածի հետ՝ մենք նոյն այդ հարցի մասին յայտարարում ենք, որ Ադրբէջանի և Հայաստանի միջև եղած սահմանային վէճերը պիտի լուծուեն աշխատաւորութեան կամքի համաձայն և որ Ղարաբաղի գիւղացիութիւնը ութը համագումարներով արտայայտել է իր անխախտ կամքը՝ լինելու Հայաստանի հանրապետութեան կազմի մէջ։ Ինչ վերաբերում է Զանգեզուրին, պէտք է յայտնել, որ